



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19184

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի հունիսի 02-ի թիվ 71-Ա ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/59-Ա**

**ՓԱՏՏԱԲԱՆ ԿԱՐԻՆԵ ՍԻՄԻԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյան, խորհրդի անդամներ՝ Կարեն Սարգսյանի, Գայանե Դեմիրջյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի և Սեդրակ Ասատրյանի կազմով,
քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբան Կարինե Սիմիդյանին (արտոնագիր թիվ 944) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Քաղաքացի Սուսաննա Խանգադյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանին դիմել է իր երեխաների խնամակալության հարցով: Դիմողը հայտնել է նաև, որ առաջին հանդիպումը փաստաբանի հետ տեղի է ունեցել 18.05.2019 թվականին և որպես հոնորար սահմանվել է 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարը:

Դիմողը նշել է, որ 24.05.2019 թվականին փաստաբան Կարինե Սիմիդյանին հանձնել է գործի համար անհրաժեշտ փաստաթղթերը, այնուհետև՝ 28.05.2019, 04.06.2019թ. և 26.06.2019 թվականին կատարել է վճարումներ՝ ընդհանուր 130.000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Դիմողը հայտնել է նաև, որ երբ իր ամուսինը երեխաներին տարել է Թալին քաղաք և պայմանավորված ժամին հետ չի բերել և չի պատասխանել իր հեռախոսագանգերին, փաստաբան Կարինե Սիմիդյանից որևէ ստույգ կողմնորոշում իր իրավունքների վերաբերյալ չի ստացել: Այնուհետև, երբ օրեր անց զանգահարել է փաստաբան Կարինե Սիմիդյանին, որպեսզի իմանա, թե

ինչպես կարող է ամուսնու բնակարանից վերցնել իր հագուստները, վերջինս խորհուրդ է տվել կամ դիմել ԱԻՆ ծառայությանը կամ էլ ամեն օր շորերը լվանալ և հագնել, իսկ վերջին հանդիպմանը այն հարցին, թե ինչու է ձգձգվում գործը, պատասխանել է, որ երկիրը խառն է և հերթական անգամ ոգևորել է ասելով՝ «դու տես ինչ ենք անելու» կոչով:

Դիմողը նշել է, որ Դատալեքս տեղեկատվական կայքից տեղեկացել է, որ դատարան հայց չկա ներկայացված, այնինչ փաստաբան Կարինե Սիմիոյանը պնդել էր, որ ամեն ինչ գնում է իր հունով: Այնուհետև՝ գրասենյակում պահանջել է բացատրություն և համատեղ աշխատանքի կասեցում, որին ի պատասխան փաստաբան Կարինե Սիմիոյանը սկսել է գոռալ և սենյակից դուրս է հրավիրել իրեն, ուստի ինքը պահանջել է իր վճարած գումարները և փաստաբանը նշել է, որ վերջնահաշվարկ կկատարի և կզանգահարի: Դրանից հետո ևս մեկ անգամ զանգահարել է և գրել՝ տեղեկացնելով, որ ստիպված կլինի բողոքել և դիմել օգնության, որին ի պատասխան փաստաբան Կարինե Սիմիոյանը սպառնացել է, որ կդիմի ոստիկանություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 30.09.2019թ. թիվ 390-Ա/ԿԳ-19184 որոշմամբ փաստաբան Կարինե Սիմիոյանի (արտոնագիր թիվ 944) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

04.10.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

04.02.2020 թվականի Խորհրդի նիստին Դիմողը ներկայացել է և ըստ էության վերահաստատել է վերահաստատել է դիմումում ներկայացված իր դիրքորոշումը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Իր բացատրությամբ Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը 2019թ-ի մայիս ամսին դիմել է իրեն ալիմենտի և անչափափաս երեխաների բնակության վայրը իր բնակության վայր որոշելու պահանջներով: Սակայն նա ունեցել է նաև այլ պահանջներ՝ ստանալու ամուսնու ամբողջ գույքը, ինչպես նաև ավտոմեքենան, ուստի հետագայում նրան բացատրել է իր իրավունքները, թե ինչ

պահանջներով կարող է դիմել դատարան: Փաստաբանը Դիմողի հետ հանդիպել է սրճարանում և մանրամասն իրավաբանական խորհրդատվություն է տրամադրել, իսկ խորհրդատվություն ստանալուց հետո, Դիմողը դատարան դիմելու կարգի և պայմանների, ինչպես նաև պայմանագրի մասին տեղեկանալով, հայտնել է, որ համաձայն է, սակայն խնդրել է իրավաբանական ծառայության պայմանագրով նախատեսված գումարը վճարել մաս-մաս:

Փաստաբան Կարինե Սիմիդյանը բացատրությամբ նաև հայտնել է, որ Դիմողի հետ կնքվել է պայմանագիր, որին ծանոթացել և ստորագրել է Դիմողը, ինչպես նաև վերջինիս տեղեկացրել է, որ փաստաբանը որևէ երաշխավորություն չի տալիս իր կողմից կատարվող աշխատանքի արդյունքի վերաբերյալ և որ փաստաբանը իրավունք ունի իր կողմից վճարած գումարը պահել՝ որպես իր կողմից բաց թողնված օգուտ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանը կարող էր նույն ժամանակահատվածում այլ պատվիրատուների հետ կնքել պայմանագրեր և ստանալ եկամուտ:

Փաստաբան Կարինե Սիմիդյանը նշել է, որ հարցումներ է կատարվել ՀՀ Առողջապահության նախարարություն «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲ ընկերություն, որպեսզի ստանա Դիմողի նախկին ամուսնու առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև նույն հարցով դիմել է ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲ ընկերություն: Փաստաբանը Դիմողին բացատրել է, որ երբ հարցումների պատասխանները պատրաստ լինեն կդիմի դատարան: Այնուհետև՝ պատասխանները պատրաստ լինելուն պես կազմվել է հայցադիմում ալիմենտի և անչափահաս երեխաների բնակության վայրը մոր բնակության վայր որոշելու պահանջներով:

Փաստաբան Կարինե Սիմիդյանը նշել է նաև, որ Դիմողը իր դիմումի մեջ նշել է սուտ տեղեկատվություն, որը չի համապատասխանում իրականությանը, քանի որ 2019թ. հունիս ամսին զանգահարել է Սուսաննա Խանզադյանին ճշտելու իր գործողությունները և այն, թե արդյոք վերջինս զանգահարել է երեխաներին, խոսել է և երբ է հայրը բերելու իր մոտ, Սուսաննա Խանզադյանը խնդրել է, որ ինքը այցելի «Մուրզիկա» մանկապարտեզ և քննարկեն հետագա անելիքները: Հանդիպմանը ներկա են գտնվել նաև Դիմողի ընկերուհիները՝ Լուսինեն և Ռիպան, որոնց ներկայությամբ քննարկում է տեղի ունեցել և առաջարկվել է, որպեսզի Դիմողը մենակ չգնա ամուսնու մոտ, այլ միասին գնան:

Փաստաբան Կարինե Սիմիդյանը նշել է նաև, որ իրեն հուզող բազմաթիվ հարցերին պատասխանել է առաջին օրը, երբ տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն: Ինչպես հետո պարզ դարձավ իրենք (ընկերուհիները) գտել են Դիմողի համար ավելի մատչելի գներով իրավաբանական ծառայություններ մատուցող փաստաբան, որն էլ պատճառ է դարձել այս ամբողջ քաշքշուկի հիմքը:

Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

04.11.2019թ. կարգապահական գործը նախապատրաստող անձ Նարինե Սարգսյանը կազմել է եզրակացություն:

09.12.2019թ. կարգապահական գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2020 թվականի փետրվարի 04-ին, ժամը՝ 19:00-ին և 2020 թվականի հունիսի 02-ին, ժամը՝ 19:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- Դիմող Սուսաննա Խանզադյանը հանդիսանում է Կարինե Սիմիդյանի վստահորդը (սույն փաստը հաստատված է համարվում կողմերի միջև 24.05.2019թ. կնքված քաղաքացիական գործով փաստաբան հանդես գալու մասին պայմանագրով):

- Փաստաբանը հարցումներ է կատարել ՀՀ Առողջապահության նախարարություն «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ և ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական Հանրապետական Կենտրոն» ՓԲԸ Դիմողի ամուսնու՝ Արթուր Վազգենի Ներսիսյանի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար (սույն փաստը հաստատված է համարվում վերոնշյալ մարմինների կողմից ուղարկված պատասխան գրությունների պատճեններով):

- Փաստաբան Կարինե Սիմիդյանը բացատրությամբ հայտնել է, որ հայցադիմում է ներկայացրել, ինչպես նաև բացատրությանը կից ներկայացրել է հայցադիմումի օրինակը, սակայն Datalex տեղեկատվական կայքում առկա չէ

Դիմող Սուսաննա Խանգադյանի անվամբ դատական գործ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարինե Սիմիդյանի (արտոնագիր 944, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (4 ավարտված և 1 ընթացիկ վարույթ):

Հարուցված վարույթներից մեկը կարճվել է, իսկ երեքով Կարինե Սիմիդյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից երկուսով «նկատողություն» կարգապահական տույժի, իսկ մեկով՝ «խիստ նկատողություն» հիմնական կարգապահական տույժի և «8 ժամ լրացուցիչ վերապատրաստում» լրացուցիչ կարգապահական տույժի:

Փաստաբանի նկատմամբ կիրառված «նկատողություն» և «խիստ նկատողություն» կարգապահական տույժերը մարվել են, իսկ «լրացուցիչ վերապատրաստում» կարգապահական տույժը մարված չէ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանը ենթակա է պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման համար, իսկ Կանոնագրքի 3.1.8 ենթակետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 2.7.2 ենթակետի խախտման մասով՝**

- Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պարզաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Վերլուծելով նշված կանոնը և համադրելով այն գործում առկա փաստերի հետ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիդյանի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջներին հետևյալ պատճառաբանությամբ.

Նշված կանոնով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պատշաճ պաշտպանության համար: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպանի և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հեղինակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Փաստաբանի և Դիմողի միջև 24.05.2019թ. կնքվել է քաղաքացիական գործով փաստաբան հանդես գալու մասին պայմանագիր, որով պակմանագրի առարկան որոշակի չէ:

Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ չնայած փաստաբանը բացատրությամբ պնդել և հավաստիացրել է, որ հայցադիմում է ներկայացրել դատարան Դիմողի գործով, սակայն վերջինիս կողմից պայմանագրի կնքումից՝ 24.05.2019թ. մինչ կարգապահական նիստի օրը՝ 02.06.2020թ, դատարան հայցադիմում ներկայացնելու մասին Դատալեքս համակարգում տեղեկություններ առկա չեն, ուստի պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարինե Սիմիոյանը չի կատարել իր ստանձնած պարտավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը խախտել է Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջները:

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.5.5 կետի խախտման մասով**

- Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Սույն ենթակետի համաձայն փաստաբանը պարտավոր է պատշաճ կերպով իրականացնել մասնագիտական պարտականությունները, ինչը ներառում է նաև խորհրդատվության մատուցում և ժամանակին վստահորդի շահերի պաշտպանություն ըստ անհրաժեշտության տարբեր մարմիններում և համապատասխանաբար ճիշտ մեթոդների ընտրությամբ:

Խորհուրդը գտնում է, որ տվյալ պարագայում փաստաբանը չի կատարել վերոնշյալ իրավանորմի պահանջները, մասնավորապես Դիմողին պատշաճ

կերպով խորհրդատվություն չի մատուցել և վերջինիս գործով հայցադիմում չի ներկայացրել դատարան:

Ամփոփելով վերոգրյալը, ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը խախտել է Կանոնագրքի 3.5.5 կետով սահմանված պահանջները:

➤ **Փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.1.8 կետի խախտման մասով**

- Կանոնագրքի 3.1.8 ենթակետը սահմանում է *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Խորհուրդն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ փաստաբանը հանձնարարության պատշաճ կատարումը չի կարողացել ապահովել զբաղվածության կամ որևէ այլ պատճառով, ինչի մասին իրեն հայտնի է եղել հանձնարարությունն ընդունելու պահին:

Վերը նշված կանոնը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ հանձնարարությունն ընդունելու պահին փաստաբանին հայտնի է եղել որևէ պատճառ, այդ թվում նաև զբաղվածությունը, որը խոչընդոտելու է հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարմանը և չնայած այդ հանագամանքին, փաստաբանն ընդունել է հանձնարարությունը:

Նկատի ունենալով, որ նշված փաստերը չեն հաստատվել, Խորհուրդն այս մասով փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 3.1.8 կետին հակասող:

Միջազգային փաստաթղթերում սահմանված կարգավորումների մասով

ՄԱԿ-ի կողմից ընդունված Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետի համաձայն՝ *փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության իրականացմանը նպաստելիս... պարտավոր են մշտապես գործել ազատ և բարեխիղճ՝ օրենքի և փաստաբանի մասնագիտության ճանաչված չափորոշիչների և էթիկայի համաձայն:*

Նույն սկզբունքների 15-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները պետք է մշտապես լինեն լոյալ իրենց վստահորդների նկատմամբ և հարգեն իրենց վստահորդների շահերը:*

Թե՛ Կանոնագիրքը և թե՛ վերը մեջբերված միջազգային իրավական ակտերը հստակորեն սահմանում են փաստաբանի պարտականությունները վստահորդին մատուցել պատշաճ և ժամանակին փաստաբանական ծառայություն և կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին: Ըստ էության, թե՛

Կանոնագիրքը և թե՛ վերոնշյալ միջազգային իրավական փաստաթղթերը փաստաբանի քննարկվող երկու պարտականությունը դիտարկում են մասնագիտական բարեխղճության և ջանասիրության բաղադրատարր: Ավելին՝ Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետով փաստաբանների մասնագիտական բարեխղճության չափանիշ է համարվում ներպետական օրենսդրությամբ փաստաբանի վրա դրված չափանիշներն ու էթիկայի նորմերը պահպանելը և կատարելը: Տվյալ պարագայում այդպիսիք սահմանված են Օրենքով և Կանոնագրքով:

Մասնագիտական բարեխղճության սկզբունքի խախտում է հանդիսանում փաստաբանի ցանկացած այնպիսի վարքագիծ, որը դրսևորվում է վստահորդին փաստաբանական ծառայության ուշացած մատուցմամբ կամ ընդհանրապես չմատուցմամբ, զբաղվածության կամ այլ պատճառներով վստահորդին որակյալ իրավաբանական օգնության տրամադրման անհնարինության գիտակցելով՝ վստահորդից հանձնարարության ընդունմամբ և վստահորդին վերջինիս գործի ընթացքի մասին չտեղեկացմամբ կամ պարբերաբար չտեղեկացմամբ, ինչպես նաև վստահորդի հարցերին հնարավորինս սպառիչ և ինֆորմատիվ չպատասխանելով:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ Պատասխանողը պատշաճ իրավաբանական օգնություն ցույց չի տվել Դիմողին, մասնավորապես՝ փաստաբան Կարինե Սիմիդյանը չի կատարել պահանջվող գործողությունները բարեխիղճ և ժամանակին:

Խախտելով Կանոնագրքի 2.7.2, 3.5.5 ենթակետերի պահանջները՝ Պատասխանողը խախտել է նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը, քանի որ վերջինս փաստաբանի վրա դրել է Կանոնագրքի պահանջները պահպանելու և կատարելու պարտականություն, որը համարվում է խախտված, երբ հաստատվում է փաստաբանի կողմից Կանոնագրքի որևէ դրույթի խախտման փաստը:

«Վ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Նոր կանոնագիրք) 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագիրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

Նոր կանոնագրքի 2.7.2, ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Նոր կանոնագրքի 3.5.5, ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը, դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբան Կարինե Սիմիդյանի վերոհիշյալ արարքը Նոր կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի իմաստով նույնպես խախտում է համարվում հետևապես Կարինե Սիմիդյանի արարքը պեպք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Կանոնագրքի (2012թ.) 2.7.2 և 3.5.5 ենթակետերով:

Կարգապահական տույժի ընտրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պեպք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների

4) տուգանք

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Կարինե Սիմիդյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ

մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարինե Սիմիոյանին (արտոնագիր թիվ 944) ճանաչել մեղավոր Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Կարինե Սիմիոյանի նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Փաստաբան Կարինե Սիմիոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.1.8 կետի մասով կարճել:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան

**02 հունիսի 2020թ.
թիվ ԿԳ/59-Ա
ք. Երևան**